ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Տավուշի մարզի Չորաթան համայնքի ղեկավարի 2011թ-ի 1-ին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին հանրությանը ներկայացվող հաշվետվությունը

30.03.2011թ.

(Զեկուցող համայնքի ղեկավար Վ . Բաղմանյան)

Համայնքի ղեկավար Վ. Բաղմանյանը նշեց, որ 1-ին եռամսյակի ընթացքում կատարվել է որոշակի աշխատանքներ:
Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցված է շատ վաղուց , վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս են եկել մաշված ջրագծերը:Ընդառաջելով բնակչության պահանջներին 1-ին եռամսյակի ընթացքում ավարտվել է Ակների Մեծ Չոր կոչվող հանդամասից 2.5 կմ. խմելու ջրագծի ծրագրի աշխատանքները,որը հնարավորություն է տվել գյուղի միջին և ներքին թաղամասերի, մոտ 80 տնտեսություններին ապահովելու խմելու ջրով և երիտասարդությանը ժամանակավորապես ապահովել աշխատատեղերով,որն էլ իր հերթին որոշակի բարելավել է բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:
Բարեկարգվել և խճապատվել է ներհամայնքային ճանապարհները:
Համայնքում գործող «Հեյֆեր» ծրագրով անապահով ընտանիքներին տրամադրվել է կովեր:
Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներ շատ կան , որն էլ պատճառ է դառնում արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճին:
Մոտ 40 ընտանիք ընդգրկված է «Փարոս» ընտանեական նպաստների համակարգում:
Բացատրական աշխատանքներ է տարվում բնակչության շրջանում հարկերի և վարձավճարների ժամանակին հավաքագրման համար, որն էլ իր հերթին կանդրադառնա բյուջեով նախատեսվող աշխատանքների ժամանակին կատարմանը:
Քննարկվել և ընդառաջել ենք բնակչության կողմից տրված բանավոր և գրավոր տրված դիմումներին և առաջարկություններին:

ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԲԱՂՄԱՆՅԱՆ